ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 12.09.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
4. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
8. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
13. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակի մարզի ավագ դպրոցների աշակերտների և նախորդ տարիներին բուհ չընդունված դիմորդների հետ համալսարանի կողմից 2019-2020 ուստարում կազմակերպվող դասընթացների անցկացման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. Համալսարանում իրականացվող «ABIONET » և «NORKENT » ծրագրերի շրջանակներում լրացական դասընթացներիի կազմակերպման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ ՝Ն. Ավետիսյան

3. Բալկանյան երկրների Աթլետիկայի 72-րդ առաջանությունում՝ համալսարանի մանկավարժության ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Երվանդ Գառնիկի Մկրտչյանի կողմից I մրցանակային տեղը զբաղեցնելու կապակցությամբ նրան դրամական պարգևատրում տրամադրելու մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

4. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

Շիրակի մարզի ավագ դպրոցների աշակերտների և նախորդ տարիներին բուհ չընդունված դիմորդների հետ համալսարանի կողմից 2019-2020 ուստարում կազմակերպվող դասընթացների անցկացման մասին

Պարոն Սերոբյանը նշեց, որ այս ուստարում դիմորդների հետ կազմակերպվող դասընթացներն ու մարզի դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումները բուհի կողմից պետք է կազմակերպվեն նախորդ տարիներից ավելի շուտ, քանի որ դպրոցներում բուհեր դիմելու հայտերը աշակերտների կողմից լրացվում են փետրվար ամսից և որպեսզի նրանց մասնագիտական կողմնորոշման համար մեր կողմից իրականացվող աշխատանքները ժամանաավրեպ չլինեն, դրանք ավելի արդյունավետ պետք է կազմակերպել : Պարոն Սերոբյանն առաջարկեց, որ բոլոր կենտրոնների ու ամբիոնների կողմից տրվեն առաջարկություններ կապված մարզի դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների հետ, ընդհուպ հանդիպումներ դպրոցներում կամ բուհի կողմից տրանսպորտի տրամադրում՝ աշակերտների բուհ այցելելու համար, լաբորատորիաների հետ դիմորդների ծանոթացում: Պարոն Սերոբյանն առաջարկեց, որ միջոցառումների պլանը կենտրոնների տնօրենների ու ամբիոնների վարիչների կողմից ներկայացվի մինչև ս/թ.-ի սեպտեմբերի 18-ը, իսկ աշխատանքները կազմակերպել՝ (բուհից այցելություններ դպրոցներ, դիմորդների այցելություն բուհ ¤ սեպտեմբերի 23-30-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2019-2020 ուստարում դիմորդների համար համալսարանի կողմից կազմակերպվող նախապատրաստական դասընթացները կազմակերպել ոչ միայն ՇՊՀ-ի ավագ դպրոցի աշակերտների, այլ նաև Շիրակի մարզի դպրոցների 12-րդ դասարանի աշակերտների և նախորդ տարիներին բուհ չընդունված դիմորդների համար:

2. Հանձնարարել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնին և համալսարանի կայքի պատասխանատուին կազմել և հրապարակել հայտարարություն՝ նախապատրաստական դասընթացների անցկացման լուսաբանման նպատակով:

3. Հանձնարարել կենտրոնների տնօրեններին, դեկաններին ու ամբիոնների վարիչներին մինչև սույն թվականի սեպտեմբերի 18-ը ներառյալ, ներկայացնել առաջարկությունների պլան՝ մարզի դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Համալսարանում իրականացվող §ABIONET¦ և §NORKENT¦ ծրագրերի շրջանակներում լրացական դասընթացներիի կազմակերպման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ համալսարանում իրականացված Նորկենտ և Էրազմուս+ ABioNet ծրագրերով նախատեսված է բուհում ներդնել այդ ծրագրերի շրջանակներում ընդգրկված դասընթացները՝ համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններում: Այնուհետև արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն պարոն Մելքոնյանի կողմից ներկայացվեցին այդ դասընթացները.

1. §Կրթության կազմակերպում¦ մագիստրոսական ծրագրում՝ §Ներառական կրթության կազմակերպում¦ դասընթացը:
2. §Սերվիս¦ և §Ադապտիվ ֆիզկուլտուրա¦ բակալավրի ծրագրերում՝ §Կայուն տուրիզմի զարգացում¦ դասընթացը:
3. §Կառավարում¦ կրթական ծրագրում՝ §Ներառական կրթության կազմակերպում¦ և §Կայուն տուրիզմի զարգացում¦, §Սթարթ-ապ¦ դասընթացները :
4. §Կենսաբանություն¦ մագիստրոսական կրթական ծրագրում՝ §Սթարթ-ապ¦ և §Հաղորդակցման հմտություններ¦ դասընթացները:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ համապատասխան դեկանների, ամբիոնների վարիչների և ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ քննարկման արդյունքում, հարցի շուրջ առաջարկվեց, որ վերոգրյալ դասընթացները ներդրվեն երկրորդ կիսամյակից՝ որպես լրացական առարկաներ՝ առանց կրեդիտների հատկացման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ներդնել բուհում իրականացված Նորկենտ և Էրազմուս+ ABioNet ծրագրերով նախատեսված և այդ ծրագրերի շրջանակներում ընդգրկված դասընթացները՝ համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններում:
Մասնավորապես՝
1. §Կրթության կազմակերպում¦ մագիստրոսական ծրագրում՝ §Ներառական կրթության կազմակերպում¦ դասընթացը:
2. §Սերվիս¦ և §Ադապտիվ ֆիզկուլտուրա¦ բակալավրի ծրագրերում՝ §Կայուն տուրիզմի զարգացում¦ դասընթացը:
3. §Կառավարում¦ կրթական ծրագրում՝ §Ներառական կրթության կազմակերպում¦ և §Կայուն տուրիզմի զարգացում¦, §Սթարթ-ապ¦ դասընթացները :
4. §Կենսաբանություն¦ մագիստրոսական կրթական ծրագրում՝ §Սթարթ-ապ¦ և §Հաղորդակցման հմտություններ¦ դասընթացները:
Դասընթացները ներդնել երկրորդ կիսամյակից՝ որպես լրացական առարկաներ՝ առանց կրեդիտների հատկացման:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Բալկանյան երկրների Աթլետիկայի 72-րդ առաջանությունում՝ համալսարանի մանկավարժության ֆակուլտետի §Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ¦ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Երվանդ Գառնիկի Մկրտչյանի կողմից I մրցանակային տեղը զբաղեցնելու կապակցությամբ նրան դրամական պարգևատրում տրամադրելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Մանկավարժության ֆակուլտետի §Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ¦ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Երվանդ Գառնիկի Մկրտչյանին Բալկանյան երկրների Աթլետիկայի 72-րդ առաջանությունում I մրցանակային տեղը զբաղեցնելու կապակցությամբ դրամական պարգևատրում տրամադրել:

2.Միջնորդել ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ, գլխավոր հաշվապահ՝ Ռ. Քալաջյանին Երվանդ Գառնիկի Մկրտչյանին տրամադրելու 50 000 (հիսուն հազար) ՀՀ. դրամ. դրամական պարգև:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.1 ԼՍԵՑԻՆ՝

Բուհի հրավիրյալ դասախոսների դասավանդած դասերը շաբաթ օրերին տեղափոխելու թույլտվության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ բուհում դասավանդում են նաև հրավիրյալ դասախոսներ և նկատի ունենալով նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը անհրաժեշտություն է առաջանում թույլատրել նրանց

դասերը տեղափոխել շաբաթ օրերին՝ պահպանելով ուսանողների համար հնգօրյա աշխատանքային շաբաթը՝ երկու հանգստյան օրով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բուհում դասավանդող հրավիրյալ դասախոսներին, անհրաժեշտության դեպքում, թույլատրել դասերը տեղափոխել և իրականացնել շաբաթ օրերին՝ ուսանողների համար պահպանելով հնգօրյա աշխատանքային շաբաթը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.2 ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 4-րդ կուրսի պրակտիկաներին չմասնակցած ուսանողների կրկնակի պրակտիկայի անցկացման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակի պրակտիկային չմասնակցած ուսանողներին, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, թույլատրել մասնակցելու կրկնակի պրակտիկային՝ պրակտիկայի վայրերի փոփոխությամբ՝ հետևյալ ժամկետներում.

I փուլ - 30.09-25.10. 2019թ.
II փուլ - 11.11-06.12. 2019թ.

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.3 ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի պրակտիկային չներկայացած ուսանողի կրկնակի պրակտիկա անցնելու ժամանակացույցի մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

Տիկին Ն. Ավետիսյանը ներկայացրեց, որ 2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի պրակտիկային չներկայացած ուսանողը բռնցքամարտի ՀՀ հավաքականի թիմի անդամ, մանկավարժության ֆակուլտետի §Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումներ¦ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հենրիկ Կամոյի Սարգսյանն է:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Արթուր Գևորգյանը բուհի ռեկտորին դիմել է գրությամբ՝ տեղեկացնելով, որ Հենրիկ Կամոյի Սարգսյանը սեպտեմբերի 6-22-ը ՌԴ-ի Եկատերինբուրգ քաղաքում մասնակցել է աշխարհի առաջնությանը և խնդրել, որ Հենրիկ Սարգսյանի բացակայությունները վերը նշված ժամանակահատվածում համարել հարգելի:

Տիկին Ավետիսյանը հորդորեց ռեկտորատի անդամներին թույլատրել ուսանողի համար կրկնակի պրակտիկան կազմակերպել 24.09-21.10. 2019թ.

ժամանակահատվածում, ՇՊՀ-ի ավագ դպրոցում՝ մեթոդիստ Համլետ Անտիկյանի ղեկավարությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի պրակտիկային բռնցքամարտի ՀՀ հավաքական թիմով Եկատերինբուրգում աշխարհի առաջնությանը մասնակցելու պատճառով չներկայացած, §Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումներ¦ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հենրիկ Կամոյի Սարգսյանի կրկնակի պրակտիկան թույլատրել կազմակերպել 24.09.2019թ.-21.10.2019թ. ՇՊՀ-ի ավագ դպրոցում՝ մեթոդիստ Համլետ Անտիկյանի ղեկավարությամբ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.4 Համալսարանի հավատարմագրման գործընթացի շուրջ կազմակերպչական հարցերի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ համալսարանի հավատարմագրման հետ կապված կազմակերպչական աշխատանքներն ընթացքի մեջ են և հանձնարարեց գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին ինքնավերլուծություն իրականացնող հանձնաժողովի անդամների և իր (ռեկտորի ԺՊ-ի¤ հետ հանդիպում կազմակերպելու՝ նրանց հստակ հանձնարարություններ տալու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ընդունել ի գիտություն

4.5 Մագիստրոսի կրթական ծրագրով սովորող և միաժամանակ աշխատող ուսանողների բուհի դասընթացներից բացակայությունների հարցի վերաբերյալ

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ այս ցավոտ հարցի քննարկումն ու օպտիմալ լուծման ճանապարհի գտնելը այսօր խիստ անհրաժեշտ են բուհում: Նա նշեց նաև, որ նման հիմնահարցի առաջ կանգնած են հանրապետության համարյա բոլոր բուհերը: Պարոն Սերոբյանը հանձնարարեց ֆակուլտետների դեկաններին հարցի շուրջ ներկայացնել իրենց առաջարկություններն, որպեսզի այն ռեկտորատի նիստում նորից քննարկվի և ընդունվի սկզբունքային որոշում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ֆակուլտետների դեկաններին հանձնարարել մագիստրոսի կրթական ծրագրով սովորող և միաժամանակ աշխատող ուսանողների բուհի դասընթացներից բացակայությունների հարցի վերաբերյալ ներկայացնել իրենց առաջարկությունները

4.6 ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատան կողմից համալսարանի §Լավագույն դասախոս¦-ին և §Լավագույն ուսանող¦-ին խրախուսելու հարցի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ սեպտեմբերի 17-ին ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատան անդամների այցի շրջանակներում, համալսարանից §Լավագույն աշխատակց¦-ի և §Լավագույն ուսանող¦-ի (ՏՏ մասնագիտական ոլորտից¤ մեկական անուններ պետք է ներկայացնել՝ ԱՄԷ-դեսպանատան կողմից նախատեսված է խրախուսման ներկայացնելու և նրանց համար այց կազմակերպել ԱՄԷ: Պարոն Սերոբյանը նշեց, որ Պարոն Մելքոնյանի և բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան պարոն Պողոսյանի ճշգրտած տվյալներով լավագույն ուսանողը, ըստ ՄՈԳ-ի, բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ԻԿՄ 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Մինասյանն է: Պարոն Սերոբյանը նշեց, որ §լավագույն դասախոս¦-ին ընտրելու համար ռեկտորոտի անդամները ներկայացնեն իրենց առաջարկությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ռեկտորատի քարտուղար **Կ. Պետրոսյանը**, որը գտնում է, որ պետք է սահմանել որոշակի չափորոշիչներ

Ըստ տիկին **Ավետիսյանի**, քանի որ համալսարանը գիտակրթական հաստատություն է մրցույթի չափորոշիչներ առաջին հերթին պետք է լինեն գիտական աստիճանը և կոչումը: Ռեկտորատի անդամները հավանության արժանացրին այս չափորոշիչը, այնուհետև պարոն **Սերոբյանը** առաջարկեց մեկ այլ չափանիշ, ըստ որի անձը համալսարանում պետք է աշխատած լինի առնվազն 5 տարի, որը նույնպես ընդունվեց ռեկտորոտի անդամների կողմից:

Պարոն Սերոբյանը հանձնարարեց ֆակուլտետների դեկաններին ամբիոնների հետ համագործակցված, յուրաքանչյուր ամբիոնից ներկայացնել վերոգրյալ չափորոշիչներին համապատասխանող և իհարկե համալսարանի համար հոգացավ ու դասախոսների, ուսանողների համար ընդունելի դասախոսների անուններ՝ յուրաքանչյուր ամբիոնից 2-ական թեկնածու:

Քննարկումների արդյունքում §Լավագույն դասասխոս¦ առաջադրվեց բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, երկրաբանական գիտությունների դոկտոր Արտուշ Արամի Թամրազյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝
§Լավագույն դասախոս¦ առաջադրել բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, երկրաբանական գիտությունների դոկտոր Արտուշ Արամի Թամրազյանի թեկնածությունը:
§Լավագույն ուսանող¦՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ԻԿՄ 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Մինասյանի թեկնածությունը:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկան՝ Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.նիրավ.ապահովման
բաժնի վարիչ՝ Ա. Հովհաննիսյան